ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 6-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 պայմանագրում 2019 թվականի ապրիլի 1-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Բանկային երաշխիքի առկայությունը և պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը կանխավճար տալու մասին:
Փոփոխության նկարագրություն	Կողմերը որոշեցին Պայմանագրի 18.01.2019թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ. <<1.4 2019 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 22 660 000 (քսաներկու միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:
Փոփոխության հիմնավորում	2017 թվականի հուլիսի 6-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 պայմանագրի 8.4 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի

ք. Երևան 01.04.2019 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բազալտշին>> ԱԿ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս կոոպերատիվի նախագահ Գ. Մարտիրոսյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 18.01.2019թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.4 2019 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև **22 660 000 (քսաներկու միլիոն վեց հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամի չափով՝ Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կապալառու՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Բազալտշին>> ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	Գեղարքունիքի մարզ
կառավարական տուն 3	գ. Գեղարքունիք
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Վարդանանց մ/ճ
Հ/Հ 900011012573	Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 08400345
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Մարտիրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.